ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-057-11.03.2019-ԱՍ-011/0) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	Առաջարկի հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՆԱՐԵԿ ՁԵՅՆԱԼՅԱՆ	Նախագիծ	Նախատեսել դրույթներ գործող օրենքի 55-րդ հոդվածում՝ նախագծով առաջարկվող փոփոխությունների արդյունքում կենսաթոշակի և նպաստի չափերը 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձանց համար համապատասխանաբար 40 և 20 տոկոս հավելումներով ապահովելու մասին: ***Հիմնավորում:*** Նախագծի առաջարկվող խմբագրմամբ ընդունման արդյունքում 1-ին, 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձանց կենսաթոշակի և նպաստի չափերը կհավասարեցվեն, որով կխախտվի մեր կողմից վավերացված կոնվենցիաներով պահանջվող արդարության սկզբունքը և բացի դրանից, կիմաստազրկվի բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող ծառայության գործառույթը՝ հաշմանդամության խումբ որոշելու իմաստով:	Ընդունվել է: Կենսաթոշակի նվազագույն չափը վերաբերում է Օրենքի 15-րդ կետով սահմանված կարգով հաշվարկված չափին: Օրենքի 55-րդ հոդվածով սահմանված հավելումը ևս տրվում է 15-րդ կետով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակին: Ըստ այդմ, Օրենքի 55-րդ հոդվածով սահմանված հավելումը կտրվի նաև այն դեպքում, երբ օրենքի 15-րդ հոդվածի հիման վրա հաշվարկված հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի չափը պակաս լինի նվազագույն կենսաթոշակի չափից: Միաժամանակ, տարընկալումից խուսափելու համար Նախագիծը լրացվել է օրենքի 55-րդ հոդվածում համապատասխան փոփոխություն կատարելու մասին դրույթներով (նախագծի 7-րդ հոդված):	Ընդունվել է